

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ

ԵԱՀԿ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿ

ԶԵԿՈՒՅՑ

«ՀՀ նոտարական գրասենյակների և ՔԿԱԳ տարածքային բաժինների հասարակական մոնիթորինգ» ծրագրի շրջանակներում իրականացված մոնիթորինգի արդյունքները

(ՔԿԱԳ տարածքային բաժինների հասարակական մոնիթորինգի հատված)

ԵՐԵՎԱՆ – 2011թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Նախաբան

ՔԿԱԳ գործարքների բնույթը

Ծառայությունների մատուցման որակը

Բավարարվածությունը ՔԿԱԳ տարածքային բաժինների աշխատանքից

Քաղաքացիների տեղեկացվածության հիմնախնդիրներ

Խախտումներ և կոռուպցիոն դրսևորումներ

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտի օրենսդրական կարգավորումը

Եզրակացություն

Ամփոփ առաջարկություններ

Նախաբան

Ելնելով ՀՀ Քաղաքացիական կացության ակտերի գրացման (այսուհետ՝ ՔԿԱԳ) տարածքային բաժինների կողմից ՀՀ քաղաքացիներին տրամադրվող ծառայությունների որակի բարելավման գործում հասարակական կազմակերպությունների դերի մեծացման նպատակից և կոռուպցիոն դրսևորումների կանխարգելման անհրաժեշտությունից՝ ՔԿԱԳ տարածքային բաժինների ծառայություններից օգտվող քաղաքացիների հետ անցկացվել է ստանդարտացված հարցազրույցի միջոցով սոցիոլոգիական հետազոտություն: Զուգահեռաբար ՔԿԱԳ տարածքային բաժիններում Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի մոնիթորինգային ցանցի դիտորդների կողմից իրականացվել են դիտորդական առաքելություն: Նույն ժամանակահատվածում իրականացվել է քաղաքացիական կացության ակտերի գրացման ծառայությունների ոլորտը կարգավորող համապատասխան օրենսդրության վերլուծություն: Այս բոլոր աշխատանքներն իրականացվել են՝ ՀՀ նոտարական գրասենյակների և ՔԿԱԳ տարածքային բաժինների հասարակական մոնիթորինգ՝ ծրագրի շրջանակներում:

Ծրագրի իրականացման նախաձեռնությունը եկել է Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի (այսուհետ՝ տեքստում ՀԵԻԱ) կողմից: ՔԿԱԳ տարածքային բաժինների գրասենյակներում ՀԵԻԱ-ի մոնիթորինգային ցանցի անդամները 2011 թվականի մարտի 1-ից մինչև մայիսի 31-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել են դիտորդական առաքելություն:

Հայաստանի Հանրապետությունը բազմաթիվ միջազգային հանձնառություններով պարտավորվել է՝ նախաձեռնել, մշակել կամ կատարելագործել կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի համար պատասխանատվություն կրող իր անձնակազմի նախապատրաստման որոշակի ծրագրեր՝ (ՄԱԿ-ի՝ Կոռուպցիայի դեմ կոնվենցիա, 60-րդ հոդված): Պարբերական մոնիթորինգի իրականացումը պետական կառավարման համակարգի հասարակական վերահսկողության արդյունավետ մեխանիզմ է, որը կարող է մեծ դեր ունենալ ՀՀ ՔԿԱԳ ոլորտի գործառնության բարելավման գործում:

ՔԿԱԳ ոլորտի պաշտոնյաների շրջանում հակակոռուպցիոն գիտակցության ձևավորմանը և ՔԿԱԳ ոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը միտված դիտորդական առաքելությունը իրականացվել է նախապես որոշված տարածքային բաժիններում: Ընտրանքի չափանիշներն էին տվյալ բաժնում կատարվող գործարքների քանակը, տեղակայման վայրը (մայրաքաղաք, մարզկենտրոն, շրջանային նշանակության քաղաք): Համամասնորեն ընտրվել են երեքական ՔԿԱԳ տարածքային բաժիններ Երևանից (Ամուսնությունների պալատ, Կենտրոն և Նորք-Մարաշ, Նոր-Նորք), մարզկենտրոններից (Եղեգնաձոր, Կապան, Վանաձոր), ինչպես նաև Աբովյանի, Արարատի, Թալինի ՔԿԱԳ տարածքային բաժինները: Դիտորդության ընթացքում, նկատի ունենալով մոնիթորինգի ընթացիկ արդյունքները, դիտորդական առաքելություն է իրականացվել նաև Արմավիրի, Գավառի ՔԿԱԳ տարածքային բաժիններում, ինչպես նաև Երևանի Հատուկ սպասարկման (Թաղման բյուրո) բաժնում, որն իր յուրահատկությունն ունի թե՛ համապատասխան ծառայությունների մատուցման բնույթի, և թե՛ դրանց քանակի տեսանկյունից:

Արդյունքում ստացվել է, որ մոնիթորինգն ընդգրկել է ընդհանուր թվով տասներկու ՔԿԱԳ տարածքային բաժին, յուրաքանչյուրում դիտորդները աշխատել են երկուսից

չորս աշխատանքային շաբաթ, պատահականորեն ընտրված օրերին՝ խնդիր ունենալով օրվա հաճախորդների հետ ստանդարտացված հարցազրույցի միջոցով հարցում իրականացնել և անձնական դիտարկումներ կատարել: Հարցվողների ընտրանքը կազմվել է շրջանային բազմաստիճան ընտրանքի սկզբունքով:


Դիտորդական առաքելության նպատակն էր ՔԿԱԳ ծառայությունների մատուցման ոլորտում առկա հիմնախնդիրների բացահայտումը, այլ ոլորտում մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը և դրանց լուծմանն ուղղված համապատասխան առաջարկությունների ներկայացումը:

Մոնիթորինգի առաջին փուլը մեկնարկվեց 2011 թվականի մարտի 1-ին և ավարտվեց ապրիլի 7-ին, իսկ ծրագրի առաջին փուլի ավարտից հետո պատրաստվեց համապատասխան միջանկյալ զեկույց: Երկրորդ փուլի նպատակն էր փուլերի միջև ընկած ժամանակահատվածում ՔԿԱԳ տարածքային բաժինների աշխատանքներում ենթադրվող բարելավումների դինամիկայի բացահայտումը: Ծրագրի իրականացման առաջին փուլում լուրջ խախտումների բացակայությամբ առանձնացած Թալինի և Կապանի ՔԿԱԳ տարածքային բաժինները, ինչպես նաև Երևանի Ամուսնությունների Պալատը փոխարինվեցին Արմավիրի և Գավառի ՔԿԱԳ տարածքային բաժիններով ու Երևանի Հատուկ սպասարկման բաժնով: Մոնիթորինգի շրջանակներում իրականացված հարցմանը ընդհանուր առմամբ մասնակցել էին 1203 քաղաքացի, որոնցից 51%-ը կանայք էին, 49%-ը՝ տղամարդ: Հարցվածների 34%-ը ուներ բարձրագույն կրթություն, 28%-ը՝ միջին մասնագիտական, 36%-ը՝ միջնակարգ, 1.5%-ը՝ թերի միջնակարգ, 0.5%-ը՝ թերի բարձրագույն: Ռեսպոնդենտների մեջ ամենամեծ մասը տնային տնտեսուհիներն էին կազմում (23%), այնուհետև՝ սպասարկման ոլորտի աշխատողները (13%), գործազուրկները (9.75%), կրթության ոլորտի աշխատողները (8%), բանվորները (7%), կենսաթոշակառուները (6%), գյուղատնտեսության մեջ զբաղված անձիք (6%), անհատ ձեռներեցիները (5%), շինարարները (5%), առողջապահության ոլորտի աշխատողները (4%), զինվորականները (3%), ուսանողները (3%), գործարարները (3%), պետական պաշտոնյաները (1%): Հարցմանը մասնակցածների 3.25%-ը այլ զբաղմունքի մարդիկ էին:

ՔԿԱԳ գործարքների բնույթը


2011 թվականի մարտի 1-ից մինչև մայիսի 31-ը ընկած ժամանակահատվածում երկու փուլով կատարված ստանդարտացված հարցազրույցի միջոցով պարզվել է, որ ՔԿԱԳ տարածքային բաժիններ դիմած քաղաքացիների 35%-ը առաջին անգամ է օգտվում այդ բաժինների ծառայություններից, 54%-ը՝ հազվադեպ, իսկ 11%-ը հաճախ է դիմում ՔԿԱԳ տարածքային բաժիններ (տե՛ս Գծապատկեր 1):

Գծապատկեր 1. ՔԿԱԳ տարածքային բաժինների ծառայություններից օգտվելու հաճախականությունը



Քաղաքացիները գալիս են ՔԿԱԳ տարածքային բաժիններ առավելապես ամուսնություն կամ ծնունդ գրանցելու, համապատասխան տեղեկանք կամ փաստաթղթի կրկնօրինակ վերցնելու, հարազատի մահվան հետ կապված փաստաթղթեր ձևակերպելու համար (տե՛ս Գծապատկեր 2):

Գծապատկեր 2. ՔԿԱԳ տարածքային բաժիններում իրականացված պետական գրանցման ակտերի տարբեր տեսակների հարաբերական կշիռը



Ինչպես երևում է գծապատկերից, հարցվածների 24%-ը նշել է, որ ՔԿԱԳ տարածքային բաժին դիմել է ամուսնություն, 19%-ը՝ ծնունդ, 13%-ը՝ մահվան փաստ գրանցելու, 6%-ը՝ հայրություն որոշելու, 4%-ը՝ ամուսնալուծություն ձևակերպելու, 2%-ը՝ անուն փոխելու, 0.3%-ը՝ որդեգրման, 31,7%-ը՝ այլ գործարքներ իրականացնելու համար (այդ թվում՝ տեղեկանք կամ համապատասխան փաստաթղթի կրկնօրինակ վերցնելու):

Ծնունդ գրանցելու համար ՔԿԱԳ տարածքային բաժիններ այցելած մարդկանց 2%-ը նշել է, որ բաժնի աշխատակիցները փորձել էին իրենց պարտադրել, որ երեխաների անունները իրենք ընտրեն անունների ցանկից, բայց այդ մարդկանց միայն 33%-ն է համաձայնվել դա անել: 67%-ը վերջ ի վերջո իր ուզած անունն է տվել նորածին երեխային:

Հարցվածների 3%-ը նշել են, որ ՔԿԱԳ տարածքային բաժիններում մերժել էին կատարել պետական գրանցման գործողությունը: Որպես մերժման հիմնավորում նրանց մեծ մասին (71%) մատնանշվել էր համապատասխան փաստաթղթերի պակասը: Ռեսպոնդենտների 8%-ը բողոքել էր, որ մերժման համար ոչ մի հիմք չկար (հիմնականում նրանց ասել էին, որ գան հաջորդ օրը), ևս 8%-ին մերժել էին, քանի որ ՔԿԱԳ տարածքային բաժինների ղեկավարները բացակայում էին աշխատավայրից:

Ծառայությունների մատուցման որակը

Հանրային ծառայությունների այս ոլորտի նկատմամբ 2011 թվականի մարտի 1-ից մինչև մայիսի 31-ը ընկած ժամանակահատվածում երկու փուլով կատարված ՀԵԻԱ-ի կողմից մոնիթորինգի միջոցով իրականացվող վերահսկողությունն արդեն իսկ պետք է ստիպեր, որ ծառայություններ մատուցողներն ավելի բարեխիղճ վերաբերվեն իրենց պարտականություններին: Ինչպես դիտորդներից մեկն է նշել, «քաղաքացին, ով իր գործն ավարտած հեռանում էր գրասենյակից՝ մեզ շնորհակալություն հայտնեց՝ ասելով, որ դեռ այսպիսի արագ և որակյալ սպասարկում ինքը չէր տեսել և որ իր կարծիքով դիտորդների ներկայությունն է նման սպասարկման պատճառը: Սակայն դիտորդությունը ոչ միշտ և ամենուր է նման արձագանքի արժանացել:

Մոնիթորինգի ընթացքում պարզվեց, որ շատ ՔԿԱԳ տարածքային բաժիններում դրանց ղեկավարները և աշխատակիցները չէին պահպանում աշխատանքային կարգապահության կանոնները: ՔԿԱԳ տարածքային բաժինների ղեկավարները սովորություն էին դարձրել մի քանի բոլորից ընդհուպ մինչև մեկ ժամ աշխատանքից ուշանալը, աշխատաժամերին բաժնի տարածքից բացակայելը: Օրինակ՝ մարզային ՔԿԱԳ տարածքային բաժիններից մեկում ս.թ. մարտի 18-ին մոնիթորինգ իրականացրած դիտորդը հայտնել է. «Բաժնի ղեկավարը՝ չնայած, որ ընդունելության ժամ էր նշանակել ու այցելուները սպասում էին, աշխատանքի եկավ ժամը 10:40-ին: Մարդիկ բողոքում էին բաժնի ղեկավարի անկարգապահությունից՝ նշելով, որ նա լուրջ չի վերաբերվում իր գործին»:

Պետք է նշել, որ նշված ՔԿԱԳ տարածքային բաժնի ղեկավարը նաև դիտորդության նախորդ օրերին էր ուշացումով ներկայանում աշխատանքի: Ղեկավարների ուշացումների առումով նմանատիպ վիճակ էր նաև շատ այլ մարզերի և Երևանյան ՔԿԱԳ տարածքային բաժիններում: Երևանի ՔԿԱԳ տարածքային բաժիններից մեկում էլ արձանագրվել է հետևյալը.

«Բաժնի ղեկավարը ժամը 10:25-ին դուրս եկավ բաժնից և վերադարձավ ժամը 14:35-ին: Ղեկավարի բացակայության ընթացքում մի հաճախորդի հայրության ճանաչման

վկայական տվեցին, իսկ ծննդյան վկայականը՝ ոչ (մեկնաբանեցին, որ ղեկավարը պետք է ժամը 14:00-ին գա, և այդ ժամանակ կտան): Քանի որ այդ հաճախորդը շրջանից էր, այդ ողջ ընթացքում սպասում էր մեքենայի մեջ»: Կարգ ու կանոնի պահպանման վիճակի առումով ուշագրավ էր նաև դիտորդի հաղորդած հետևյալ տեղեկությունը. «Բաժնի աշխատակիցը հեռախոսով էր խոսում և դրանով էլ էր նպաստում հերթերի առաջացմանը (աշխատակիցներից մեկը աշխատանքի չէր եկել, իսկ 9:25 ընդհանուր տարածքից դուրս եկավ նաև մյուս աշխատակիցը և վերադարձավ միայն ընդմիջումից հետո)»:

Բոլոր հարցվածների միայն 3%-ն է նշել, որ իրենց հետ հաղորդակցվելիս ՔԿԱԳ տարածքային բաժինների աշխատակիցները չէին պահպանել էթիկայի կանոնները (կոպիտ էին, չէին առաջարկել նստել, սպասեցնել էին տալիս, անկողմնակալ չէին և այլն): «Բաժնի ղեկավարը չէր պահպանում էթիկայի կանոնները՝ շատ վատ էր վերաբերվում հաճախորդներին, նրանց վրա ձայն էր բարձրացնում, սենյակից սենյակ էր ուղարկում» (դիտորդի հաշվետվությունից, 16.03.2011):

Հարցման արդյունքում պարզվել է նաև, որ մեր ռեսպոնդենտների 90%-ը բավարարված է իրենց տրամադրված ծառայություններից: Սակայն ուշագրավ է, որ դժգոհ մնացած քաղաքացիների 8%-ը նշել է, որ ՔԿԱԳ տարածքային բաժնի ղեկավարը իրենցից լրացուցիչ գումար էր ակնկալում, 13%-ը բողոքում է իրենց բացատրությունների նկատմամբ բաժնի աշխատակիցների անուշադրությունից, 42%-ը դժգոհում է, որ բաժնի ղեկավարն ու աշխատակիցները միտումնավոր ձգձգում էին գործը, ստեղծելով բյուրոկրատական քաշքշուկ, 45%-ը՝ անհարկի փաստաթղթեր պահանջելուց: «Չեն տրամադրում համապատասխան փաստաթուղթ, ամեն օր ձգձգում են՝ ուղարկում են թաղապետարան, կամ ուրիշ տեղեր, ամեն օր 1000 դրամ են ծախսում» (ըստ Երևան քաղաքի վարչական շրջաններից մեկում տեղակայված ՔԿԱԳ տարածքային բաժնում ս.թ. մարտի 15-ին մոնիթորինգ իրականացրած դիտորդի զեկույցի): Ըստ մեկ այլ դիտորդի, «Մարզային ՔԿԱԳ տարածքային բաժնիներից մեկում հարցված քաղաքացիներից մեկն էլ բաժնի աշխատողի հետ վրդովված խոսակցությունից հետո բավական նեղսրտած նշեց, որ բաժնի ղեկավարը իրեն երկու ամիս շարունակ տանում, բերում է, ստեղծելով անհարկի բյուրոկրատական քաշքշուկ՝ ասելով սկզբից, վաղը եկեք, կտանք տեղեկանք», սակայն հետո պնդում էր, որ քաղաքացու հարսի ներկայությունը տեղեկանք ստանալու համար պարտադիր է:

Այդ մարդկանց 7%-ը դժգոհում էր ՔԿԱԳ տարածքային բաժնիների աշխատակիցների ոչ բավարար մասնագիտական գիտելիքներից, 3%-ը՝ այն հանգամանքից, որ աշխատակիցները միանգամից մի քանի այցելու էին սպասարկում: Այդ հանգամանքը բազմիցս փաստել էին նաև դիտորդները. «մարտի 16-ին գաղտնիության սկզբունքն ընդհանրապես չէր պահպանվում՝ քաղաքացիներին սպասարկում էին «իրենց ծանոթներ» հանդիսացող հյուրերի ներկայությամբ: Միաժամանակ սպասարկում էին մի քանի քաղաքացիների՝ չնայած որ հերթեր ընդհանրապես չկային»: Քաղաքացիները դժգոհ էին այլ պատճառներով ևս (աշխատակիցների ուշանալուց, շատ գումար վերցնելուց և այլն):

Մեծ խնդիր էր հերթերի առկայությունը ՔԿԱԳ տարածքային բաժնիներում: Չնայած այն հանգամանքին, որ հարցմանը մասնակցած քաղաքացիների 52%-ը ցանկություն էր հայտնել նախապես հերթագրվել, իսկ ռեսպոնդենտների 13%-ը հենց հերթագրման բացակայությունն էր համարում հերթերի հիմնական պատճառ, ոլորտում նախապես հերթագրվելու կարգը չէր գործում, իսկ այնտեղ, որտեղ գալիս էին հերթագրված անձիք,

հաճախ չէին կարողանում միանգամից մտնել բաժնի ղեկավարի մոտ: Իսկ ՔԿԱԳ տարածքային բաժինների աշխատակիցները հաճախ «օգտագործում» էին այդ կարգը իրենց ծանոթներին արտահերթ սպասարկելու համար՝ ասելով, որ նրանք նախապես հերթագրված են:

Հարցման մասնակիցները որպես ՔԿԱԳ տարածքային բաժիններում հերթերի պատճառներ նշում էին.

- այցելուների մեծ քանակը - 97%,
- ՔԿԱԳ բաժինների աշխատակիցների դանդաղ աշխատանքը - 73%,
- ՔԿԱԳ բաժինների աշխատակիցների անկարգապահությունը, նրանց կողմից հերթի խախտումը - 35%
- հերթագրման բացակայությունը - 14%,
- և այլն:


Բոլոր դեպքերում, տարբեր բնույթի պետական գրանցման գործարքներ կատարելու համար եկած շատ քաղաքացիներ ստիպված էին լինում բավականաչափ երկար ժամանակ կորցնել ՔԿԱԳ բաժիններում:

Պետք է նաև նշել, որ դժգոհ մնացած ռեսպոնդենտների մեծ մասը զանգատվել էր ՔԿԱԳ տարածքային բաժինների անհարմարավետությունից և անբավարար կահավորված լինելուց: Ուստի կարելի է արձանագրել, որ ՔԿԱԳ տարածքային բաժինների շենքային պայմանները (ցուրտ սպասարանները, դրանցում աթոռների բացակայությունը և այլն.) լրացուցիչ դժվարություններ են ստեղծում քաղաքացիների պատշաճ սպասարկման համար: Դիտարկումներից պարզ դարձավ, որ շատ ՔԿԱԳ տարածքային բաժիններ շենքային և գույքային պայմանների բարելավման կարիք ունեն: Օրինակ՝ Արարատում տարածքային բաժնի սենյակները ոչ բարեկարգ վիճակում էին, չէր ջեռուցվում, միջանցքում չկային նստարաններ, չկար սանհանգույց: Գավառում նույնպես շենքային պայմանները շատ վատն էին, չկար արխիվի սենյակ և ընդունարան, տարածքային բաժնում աշխատողներն օգտվում էին ընդհամենը մեկ համակարգչից և չէին հասցնում կատարել բոլոր գործերը: ՔԿԱԳ տարածքային բաժինների տարածքները հարմարեցված չեն սահմանափակ հնարավորություններով մարդկանց (հաշմանդամների) համար:

Բավարարվածությունը ՔԿԱԳ տարածքային բաժինների աշխատանքից

Հարցվածների մեծ մասը բավարարված է ՔԿԱԳ տարածքային բաժիններում քաղաքացիների ընդունելության ընթացակարգից (տե՛ս Գծապատկեր 3):

Գծապատկեր 3. Քաղաքացիների բավարարվածությունը ՔԿԱԳ տարածքային բաժինների ընդունելության ընթացակարգից




Հարցմանը մասնակցած մարդկանց 48%-ը լիովին բավարարված է ընդունելության ընթացակարգից, իսկ 39%-ը՝ ավելի շուտ բավարարված է: Ռեսպոնդենտների 6%-ը ավելի շուտ բավարարված չէ, 2%-ն էլ բոլորովին բավարարված չէ ՔԿԱԳ տարածքային բաժինների ընդունելության ընթացակարգից, իսկ հարցվածների 5%-ը դժվարացել է պատասխանել այդ հարցին:

Քաղաքացիների մի մասը կասկածում էր, որ ՔԿԱԳ տարածքային բաժինների ղեկավարներն ու աշխատակիցներն ունեն մասնագիտական բավարար գիտելիքներ: Հարցման մասնակիցների միայն 88%-ն է վստահ, որ կատարված պետական գրանցման գործողությունը համապատասխանում էր օրենքի պահանջներին և իրենք հետազայում փաստաթղթերի մասով խնդիր կամ վեճ չեն ունենա:

Մակայն, չնայած քաղաքացիների դժգոհությանը ՔԿԱԳ բաժինների աշխատակիցների ոչ բավարար մասնագիտական գիտելիքներից, այցելուների հետ հարաբերություններում էթիկայի կանոնների խախտումներից, ընդունելության ընթացակարգից, ինչպես նաև այն հանգամանքից, որ բաժնի ղեկավարը իրենցից լրացուցիչ գումար էր ակնկալում և այլն, ռեսպոնդենտների մեծ մասը (25% և 46% համապատասխանաբար) Հայաստանում քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման գործողությունների իրականացման համակարգի գործունեությունը գնահատում է շատ արդյունավետ կամ որոշ չափով արդյունավետ, 24%-ը դժվարացել է պատասխանել հարցին և միայն 5%-ն է գտնում, որ այդ համակարգն անարդյունավետ է գործում:

Ինչ վերաբերում է ամուսնության պետական գրանցման ժամկետը կրճատելու հարցին, ապա հարցմանը մասնակցած քաղաքացիների մեծ մասը կողմ էր, որ այդ ժամկետը կրճատվի. մինչև 10 օր (24%), մինչև մեկ շաբաթ (23%), մինչև մեկ օր (11%), իսկ մնացած ռեսպոնդենտները (42%) համաձայն չէին, որ կրճատվի (տե՛ս Գծապատկեր 4):

Գծապատկեր 4. Քաղաքացիների վերաբերմունքը ամուսնության պետական գրանցման ժամկետի կրճատմանը




Քաղաքացիների տեղեկացվածության հիմնախնդիրներ

Շատ քաղաքացիներ (ռեսպոնդենտների 35%-ը) մինչ գործարքը սկսելը ՔԿԱԳ տարածքային բաժնի ղեկավարի կողմից չէին ստացել պարզաբանումներ իրենց իրավունքների, պարտականությունների, բողոքարկման կարգի և գրանցման գործողությունից բխող հետևանքների վերաբերյալ: Ընդհանուր առմամբ այցելուների տեղեկացվածության մակարդակը ՔԿԱԳ բաժինների աշխատանքը կանոնակարգող փաստաթղթերի վերաբերյալ շատ հեռու է բավարար լինելուց: Շատ տարածքային բաժիններում հիմնական տեղեկատվությունը պարունակող պաստառները փակցված էին անհարմար տեղում, գրված էին դժվար ընթեռնելի տառաչափով: Քաղաքացիների համար փաստացիորեն դժվար էր օգտվել դրանցում պարունակվող տեղեկատվությունից: Քաղաքացիներից շատերը նույնիսկ չէին էլ մոտենում պատերին փակցված պաստառներին, որպեսզի ծանոթանան օրենքով սահմանված սակագներին: Արդյունքում, մեր քաղաքացիները ՔԿԱԳ բաժիններում ստանում են այնպիսի որակի ծառայություն, որը համապատասխանում է իրենց իրավագիտակցության ցածր մակարդակին:

Ուստի հասկանալի է, թե ինչու մեր ռեսպոնդենտների միայն 26%-ն է նախապես ծանոթացել ՔԿԱԳ տարածքային բաժիններում փակցված տեղեկություններին:

Պետական գրանցման գործողությունների դիմաց գանձվող պետական տուրքի չափերի մասին քաղաքացիների միայն 16%-ն է տեղեկացել պատերին փակցված սակագների ցուցակից (տե'ս Գծապատկեր 5):

Գծապատկեր 5. Պետական տուրքի չափերի մասին տեղեկացվածության աղբյուրները




Հարցմանը մասնակցածների 55%-ը նշել է, որ իրենց տեղեկացրել են ՔԿԱԳ բաժնի աշխատակիցները, 7%-ը բարեկամներից և ընկերներից է իմացել, 0.4%-ը՝ հերթում կանգնածներից, 8.6%-ը՝ տեղեկացման այլ աղբյուրներից է օգտվել, իսկ 13%-ը պետական տուրքի չափերից ընդհանրապես տեղեկացված չէր: Ինչպես տեսնում ենք, պետական սակագների վերաբերյալ այցելուների տեղեկացվածության նման պայմաններում ՔԿԱԳ տարածքային բաժինների աշխատակիցների կողմից հնարավոր չարաշահումների ռիսկեր են առաջանում, իսկ որոշ աշխատակիցներ կարող են մոլորության մեջ գցել մարդկանց: Եվ մոնիթորինգի ընթացքում բացահայտվել են նման դեպքեր: Որպես օրինակ կարելի է նշել մարզային ՔԿԱԳ տարածքային բաժիններից մեկում մարտի 23-ին դիտորդների կողմից արձանագրված դեպքը.

«ՔԿԱԳ տարածքային բաժինը գործում է քաղաքապետարանի շենքում, նույն շենքում գործում է Հայ Փոստ ՓԲԸ-ն ՀՀ մարզերից մեկի փոստային մասնաճյուղի դրամարկղ, որտեղ ոչ մի տեղ չկար փակցված տեղեկություն իրենց ընկերության վերաբերյալ: Բոլոր քաղաքացիներին ՔԿԱԳ բաժնի աշխատակիցները ուղղորդում էին վերոնշյալ դրամարկղ մուծումներ կատարելու համար: Միայնակ մոր կարգավիճակը հավաստող տեղեկանք ստանալու համար դիմած քաղաքացին այդ դրամարկղում 2000 դրամ մուծում պիտի կատարեր, բայց դիմումը կարդալուց հետո իրենից պահանջել և վերցրել են 3150 դրամ: Տեսնելով, որ դիտորդները արձանագրել են փաստը, բաժնի ղեկավարը հետ ուղղարկեց քաղաքացուն, որ սխալը շտկի: Դրամարկղի աշխատակիցը ներեղություն խնդրեց քաղաքացուց և վերադարձրեց գումարը՝ ասելով, որ ինքը սխալվել է: Սակայն նա մերժել է քաղաքացուց կրկին մուծում ընդունելը՝ պատճառաբանելով, որ իրենց համակարգիչը ժամանակավորապես չի աշխատում, քանի որ հոսանքի հետ կապված նորոգումներ են կատարվում»:

Անբավարար տեղեկացվածությամբ կարելի է բացատրել այն հանգամանքը, որ այն հարցին, թե ըստ ռեսպոնդենտների կարծիքի պետական գրանցման գործողությունների իրականացման համար վճարած պետական տուրքը համապատասխանում էր օրենսդրությամբ սահմանված չափին, քաղաքացիների միայն 57%-ն է պատասխանել՝այո: Մնացած հարցվածների զգալի մասը (38%) դժվարացել է

պատասխանել, իսկ 5%-ը նշել է, որ վճարված գումարը չի համապատասխանում օրենքով սահմանված չափին (տե'ս Գծապատկեր 6):

Գծապատկեր 6. Վճարած պետական տուրքի համապատասխանությունը օրենքով սահմանված չափին ըստ ռեսպոնդենտների կարծիքի



Խախտումներ և կոռուպցիոն դրսևորումներ

Հարցման մասնակիցների 2%-ը խոստովանել է, որ ՔԿԱԳ տարածքային բաժինների գրասենյակներում գումար է վճարել: Այդ մարդկանց գրեթե կեսը պնդում էր, որ դա պետական տուրքի գումարն էր: Մյուսները վճարել են արտագնա ծառայություն մատուցելու, պատճենահանելու, վկայականի կազմի համար: Ընդ որում, այդ մարդկանց միայն 84%-ը նշել է, որ տված գումարի դիմաց իրենց վճարման անդորրագիր չի տրվել:

Դիտորդները իրենց հերթին մեծ թվով խախտումներ էին արձանագրել վճարված գումարների հետ կապված: Մեկ այլ քաղաքացի, որը ներկա էր այս ՔԿԱԳ տարածքային բաժնում որպես ամուսնության գրանցման վկա, հայտնեց, որ երկու ամիս առաջ «Երևանի վարչական շրջանների մեկի ՔԿԱԳ տարածքային բաժնում ամուսնության գրանցումը կատարելիս ամուսնության վկայականի համար պահանջել են վճարել 3000 դրամ, իսկ երեխայի ծննդյան վկայականը ստանալու համար, որն իրեն շատ շտապ էր անհրաժեշտ, այդ բաժնում իրենից վերցրել են 15000 դրամ»:

Ուշագրավ է, որ հարցվածների 3%-ը խոստովանել է, որ ՔԿԱԳ տարածքային բաժնում իրենց անձը հաստատող որևէ փաստաթուղթ չի ներկայացրել: Որոշ դեպքերում դա չի խանգարել, որ համապատասխան գործարքները կատարվեն: «Քաղաքացիներից մեկը առանց անձնագրի էր ներկայացրել ՔԿԱԳ բաժին: ՔԿԱԳ աշխատակցուհու կողմից նրան խորհուրդ տրվեց խորհրդակցել ՔԿԱԳ բաժնի ղեկավարի հետ, և եթե թույլ տա, ապա կկատարեն համապատասխան գործարքը: Ապա, քաղաքացին դուրս եկավ ՔԿԱԳ բաժնի ղեկավարի մոտից իրեն անհրաժեշտ փաստաթուղթը ձեռքին» (ս.թ. մարտի 3-ին ՀՀ մարզերից մեկում տեղակայված ՔԿԱԳ տարածքային բաժնում դիտորդություն իրականացրած խմբի անդամի զեկույցից):

Հարցվածների 1%-ը քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործողություններ կատարելիս օգտվել է միջնորդի ծառայությունից: Ընդ որում, այդ մարդկանց 1/5-ը դա արել է ՔԿԱԳ տարածքային բաժինների աշխատակիցների ուղղորդմամբ: Բայց միջնորդների մասնակցությունը ՔԿԱԳ ծառայությունների մատուցման գործընթացին կարող է լրացուցիչ կոռուպցիոն ռիսկեր ստեղծել, քանզի միջնորդների մատուցած ծառայությունները օրենքով կանոնակարգված չեն:

Հարցվածների 1%-ին ՔԿԱԳ բաժնում առաջարկել են տեխնիկական բնույթի վճարովի ծառայություն: «Քաղաքացուց 25000 ՀՀ դրամ էին պահանջում բաժնում: Այդ քաղաքացուն ամեն կերպ փորձում էին համոզել ինչ-որ վճարովի ծառայությունից օգտվել: Քաղաքացին էլ իր հերթին պնդում էր, որ դա նրան ամենևին էլ պետք չէ: Ի վերջո քաղաքացին վճարեց այդ գումարը շենքում տեղակայված դրամարկղում» (դիտորդի հաշվետվությունից, 10. 05. 2011):

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտի օրենսդրական կարգավորումը

1. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման (ՔԿԱԳ) ոլորտի օրենսդրությունը:

ՔԿԱԳ ոլորտը կարգավորվում է մի շարք օրենսդրական ակտերով, որոնցից են.

- ՀՀ Ընտանեկան օրենսգիրք,
- ՀՀ օրենքը Քաղաքացիական կացության ակտերի մասին,

- ՀՀ Արդարադատության նախարարի հրամանը Քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված հրահանգչական ցուցումները հաստատելու մասին,
- ՀՀ Կառավարության որոշումը Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումների վկայականների լրացման կարգը, դրանց նմուշները և քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման փաստը հաստատող այլ փաստաթղթերի ձևաթղթերի նմուշները հաստատելու մասին,
- ՀՀ Կառավարության որոշումը Քաղաքացիական կացության ակտերի գրառումների ձևաթղթերի նմուշները, այդ ձևաթղթերի լրացման կարգը, ինչպես նաև քաղաքացիական կացության ակտերի գրառման դիմումի ձևաթղթերի նմուշները հաստատելու մասին,
- ՀՀ օրենքը Պետական տուրքի մասին:

2. Քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների համակարգը և իրավական կարգավիճակը.

Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման համակարգն ընդգրկում է ՀՀ Արդարադատության նախարարության ՔԿԱԳ գործակալությունը (այսուհետ՝ Գործակալություն)՝ իր կառուցվածքային ստորաբաժանումներով և տարածքային մարմիններով, ինչպես նաև ՔԿԱԳ տարածքային բաժինները, որոնք ունեն համայնքային ենթակայություն և հանդիսանում են համայնքների առանձնացված ստորաբաժանումներ:

Օտարերկրյա պետություններում ապրող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումները իրականացնում են այդ պետություններում գտնվող Հայաստանի Հանրապետության հյուպատոսական հիմնարկները:

Գործակալության նպատակներն ու խնդիրներն են՝

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման ապահովումը,
- քաղաքացիական կացության ակտերի գրանցման արխիվի կազմակերպումը,
- քաղաքացիական կացության ակտերի գրանցման ավտոմատացված տեղեկատվական բազայի ձևավորման ապահովումը:

Գործակալության կառուցվածքային ստորաբաժանումներն են.

- Քաղաքացիական կացության ակտերի գրանցման աշխատանքների և ապոստիլի բաժինը.
- Քաղաքացիական կացության ակտերի գրանցման հանրապետական արխիվը:

Գործակալության տարածքային մարմիններն են.

- Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ամուսնության պալատը,
- Քաղաքացիական կացության ակտերի գրանցման Երևանի հատուկ սպասարկման տարածքային բաժինը:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման համայնքային ենթակայության բաժինը (այսուհետ՝ ՔԿԱԳ բաժին) համայնքի ղեկավարի աշխատակազմի առանձնացված ստորաբաժանում է, որի հիմնական նպատակները և խնդիրներն են.

- քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումների իրականացումը օրենքով սահմանված կարգով և ժամկետներում.
- տարածքային բաժնի արխիվի վարումը.

- կատարված քաղաքացիական կացության ակտերի գրանցումների վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկատվության տրամադրումը:

ՔԿԱԳ բաժնի գործունեությունը կազմակերպում է համապատասխան համայնքի ղեկավարը: Բաժնի անմիջական ղեկավարումն իրականացնում է բաժնի պետը:

ՔԿԱԳ մարմինների ղեկավարներ կարող են նշանակվել իրավաբանական բարձրագույն կրթություն ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, որոնք իրենց մասնագիտական գիտելիքներով, գործնական և անձնական հատկանիշներով կարող են կատարել իրենց վերապահված լիազորությունները: *ՔԿԱԳ մարմնի ղեկավարը՝*

- կազմակերպում և վերահսկում է ՔԿԱԳ մարմնի աշխատանքները.
- կազմակերպում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված իրավական ակտերի կատարումը.
- կատարում է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ցուցումները.
- ՔԿԱԳ մարմնի աշխատողների միջև բաշխում է նրանց պարտականությունները.
- կատարում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումները.
- իր իրավասության սահմաններում համագործակցում է պաշտոնատար այլ անձանց հետ.
- ուսումնասիրում է ՔԿԱԳ մարմնի աշխատողների գործունեության դեմ ուղղված բողոքները.
- քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ իրականացնելիս ստանում է անհրաժեշտ տեղեկություններ և այլ նյութեր.
- ուսումնասիրում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցման համար տրված դիմումները, կայացնում համապատասխան որոշումներ, պարզաբանում դրանց բողոքարկման ժամկետները և կարգը.
- պատասխանատվություն է կրում ՔԿԱԳ մարմնի առջև դրված խնդիրների լուծման համար.
- իրականացնում է օրենսդրությամբ նախատեսված լիազորություններ:

ՔԿԱԳ մարմինների ղեկավարների և աշխատողների գործողությունները կարող են բողոքարկվել վերադատության և (կամ) դատական կարգով:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունն օրենքով սահմանված կարգով՝

- իրականացնում է բաժինների մեթոդական ղեկավարումը և վերահսկողությունը.
- հաստատում է քաղաքացիական կացության ակտերի գրանցումների հետ կապված՝ օրենքից բխող հրահանգչական ցուցումները.
- կարող է ներկայացնել առաջարկություններ բաժնի ղեկավարներին և աշխատողներին խրախուսելու կամ կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ.
- ուսումնասիրում է բաժինների գործունեությանն ուղղված բողոքները.

- կատարում է ստուգումներ բաժիններում գրանցման գործառույթների օրինականության պահպանման վերաբերյալ:

3. Քաղաքացիական կացության ակտերը և դրանց պետական գրանցմանը ներկայացվող ընդհանուր պահանջները.

Պետական գրանցման ենթակա քաղաքացիական կացության ակտերը հետևյալն են.

- ծնունդը,
- ամուսնությունը,
- ամուսնալուծությունը,
- որդեգրումը,
- հայրությունը որոշելը,
- անվան փոխումը,
- մահը:

Քաղաքացիական կացության ակտի պետական գրանցումը կատարվում է տվյալ ակտի գրանցման համար օրենքով սահմանված փաստաթղթերը ներկայացնելու դեպքում:

Քաղաքացիական կացության ակտի պետական գրանցումն իրականացվում է ՔԿԱԳ մարմին փաստաթղթերի ներկայացման օրը, եթե օրենքով այլ ժամկետներ նախատեսված չեն:

Քաղաքացիական կացության ակտի գրառման հիման վրա տրվում է քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վկայական, որը ստորագրվում է ՔԿԱԳ մարմնի ղեկավարի կողմից և հաստատվում է ՔԿԱԳ մարմնի կնիքով:

ՔԿԱԳ մարմնի ղեկավարին և աշխատողին քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման կապակցությամբ անձի վերաբերյալ հայտնի դարձած տեղեկությունները հրապարակման ենթակա չեն:

Քաղաքացիական կացության ակտի պետական գրանցումը մերժվում է, եթե՝

- այդ գրանցումը հակասում է օրենքի պահանջներին.
- ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում օրենքի և իրավական այլ ակտերի պահանջներին.
- օրենքով նախատեսված այլ դեպքերում:

Անձի (նրա ներկայացուցչի) պահանջով, որին մերժվել է քաղաքացիական կացության ակտի պետական գրանցումը, ՔԿԱԳ մարմնի ղեկավարը պարտավոր է տվյալ անձին (նրա ներկայացուցչին) գրավոր տեղյակ պահել մերժման հիմքերի մասին:

Քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման մերժումը կարող է բողոքարկվել դատարան:

Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումների և դրանց հետ կապված այլ գործառույթների համար գանձվում է պետական տուրք «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով:

Քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումները կատարվում են ՔԿԱԳ մարմնի աշխատավայրում: ՔԿԱԳ մարմնի աշխատավայրից դուրս կարող են կատարվել քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցումներ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և դեպքերում:

<p><i>ՀՀ կառավարությունը այդպիսի կարգ դեռևս չի սահմանել: Համաձայն ՀՀ Վարչապետի 18 նոյեմբերի 2010 թվականի N 982-Ս որոշման, վերոհիշյալ Կարգի նախագծի ներկայացման վերջնաժամկետն է 2011թ-ի նոյեմբերի 10-ը:</i></p>
--

3.1 Ծննդի պետական գրանցման հիմքերն են՝

- *ծննդյան մասին սահմանված ձևի փաստաթուղթը՝ տրված բժշկական այն կազմակերպության կողմից, որտեղ տեղի է ունեցել ծնունդը.*
- *ծննդյան մասին սահմանված ձևի փաստաթուղթը՝ տրված բժշկական այն կազմակերպության կողմից, որը ցուցաբերել է բժշկական օգնություն ծննդի ժամանակ.*
- *ծննդյան մասին սահմանված ձևի փաստաթուղթը՝ տրված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով բժշկական գործունեությամբ զբաղվող անձի (այսուհետ՝ բժիշկ) կողմից՝ բժշկական կազմակերպությունից դուրս ծննդի դեպքում.*
- *ծննդյան մասին սահմանված ձևի գրավոր հայտարարությունը՝ տրված ծննդի ժամանակ ներկա գտնված անձի (անձանց) կողմից, և երեխայի առողջության մասին բժշկական կազմակերպության տված տեղեկանքը՝ բժշկական կազմակերպությունից դուրս և առանց բժշկական օգնություն ցուցաբերելու ծննդի դեպքում:*

Երեխայի ծննդյան մասին գրավոր հայտարարությունը ՔԿԱԳ մարմնին տրվում է ոչ ուշ, քան երեխայի ծննդի օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում:

3.2 Ամուսնության պետական գրանցումը կատարում է ամուսնացողներից մեկի բնակության վայրի ՔԿԱԳ մարմինը՝ ամուսնացող անձանց համատեղ գրավոր դիմումի, իսկ ամուսնացող անձանցից մեկը ՔԿԱԳ մարմին ներկայանալու անհնարինության դեպքում՝ առանձին տրված հայտարարությունների հիման վրա:

Ամուսնության պետական գրանցումն իրականացվում է ՔԿԱԳ մարմին ամուսնացող անձանց ներկայացրած համատեղ դիմումում նշված օրը, սակայն ոչ շուտ, քան դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող 10-րդ օրը և ոչ ուշ, քան երեք ամիսը: Ամուսնացող անձանց համատեղ դիմումի հիման վրա ամուսնության պետական գրանցման 10-օրյա ժամկետը կարող է կրճատվել հարգելի պատճառների առկայության դեպքում: Ամուսնության գրանցման ժամկետը կրճատելու համար հիմք համարվող հարգելի պատճառներ են՝

- *ամուսնացող անձանց համատեղ երեխա (ներ) ունենալը.*
- *ամուսնացող կնոջ հղիությունը (առնվազն 12 շաբաթական).*
- *ամուսնացող անձի գորակոչվելը ժամկետային զինվորական ծառայության.*
- *ամուսնացող անձի՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերում ծառայության կամ ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնվելը.*
- *Հայաստանի Հանրապետությունում ամուսնացող օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, օտարերկրյա պետությունում մշտապես բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ միմյանց կամ օտարերկրյա քաղաքացիների, քաղաքացիություն չունեցող անձանց, Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հետ ամուսնության դեպքում ամուսնացողների կամ նրանցից մեկի՝ Հայաստանի Հանրապետության տարածքից երկարատև ժամանակով մեկնելու (բացակայելու) դեպքում.*
- *ամուսնացող անձի ծանր հիվանդությունը:*

Վերոհիշյալ հարգելի պատճառները պետք է հաստատված լինեն համապատասխան փաստաթղթերով (կնոջ հղիության վերաբերյալ բժշկական տեղեկանք, երեխայի ծննդյան և հայրության ճանաչման վկայական, զինվորական ծառայության վայրից տեղեկանք, Հայաստանի Հանրապետության տարածքից մեկնելու փաստը հաստատող փաստաթուղթ):

Ամուսնության պետական գրանցման ժամկետը, ելնելով կոնկրետ հանգամանքներից, կարող է կրճատվել նաև Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալության պետի թույլտվությամբ:

3.3 Ամուսնալուծության պետական գրանցման հիմքերն են՝

- *ամուսինների համատեղ դիմումը՝ ՔԿԱԳ մարմիններում ամուսինների միջև փոխադարձ համաձայնության առկայությամբ ամուսնալուծություն կատարելու համար,*
- *ամուսիններից մեկի դիմումը, եթե մյուսը դատարանի կողմից ճանաչվել է անհայտ բացակայող կամ անգործունակ կամ դատապարտվել է ազատազրկման երեք տարուց ոչ պակաս ժամկետով,*
- *դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ դատական կարգով ամուսնալուծություն կատարելու դեպքերում (երբ բացակայում է ամուսնալուծության մասին ամուսիններից մեկի համաձայնությունը, երբ ամուսիններից մեկը, չնայած առարկության բացակայության, խուսափում է ամուսնալուծությունը ՔԿԱԳ մարմիններում կատարելուց, կամ երբ ամուսինները ցանկանում են ամուսնությունը լուծել դատական կարգով՝ փոխադարձ համաձայնությամբ):*

Ամուսնալուծության պետական գրանցումը կատարում է ամուսինների (ամուսիններից մեկի) բնակության վայրի կամ ամուսնության պետական գրանցման վայրի ՔԿԱԳ մարմինը:

Ամուսնալուծության պետական գրանցումն իրականացվում է ամուսնալուծության մասին դիմում տալու օրվանից մեկ ամիս անցնելուց հետո, բայց երեք ամսից ոչ ուշ, երկու ամուսինների ներկայությամբ կամ ամուսիններից մեկի պարտադիր ներկայությամբ և մյուսի՝ սահմանված կարգով վավերացված համաձայնությամբ:

Ամուսինների կողմից ամուսնալուծության վերաբերյալ դիմումները առանձին հայտարարություններով ձևակերպելու դեպքում, մեկամսյա ժամկետի հաշվարկը սկսվում է ՔԿԱԳ մարմին ամուսնալուծության մասին երկրորդ հայտարարությունը տալու օրվանից:

3.4 Որդեգրման պետական գրանցման համար հիմք է համարվում դատարանի՝ որդեգրման մասին օրինական ուժի մեջ մտած վճիռը:

Որդեգրման պետական գրանցումն իրականացվում է որդեգրողների (որդեգրողի) կամ նրանց կողմից լիազորված անձի գրավոր դիմումի հիման վրա:

Որդեգրման պետական գրանցումն իրականացնում են որդեգրման մասին վճիռ կայացրած դատարանի գտնվելու վայրի կամ որդեգրողների (որդեգրողի) բնակության վայրի ՔԿԱԳ մարմինը:

3.5 Հայրության որոշման պետական գրանցման հիմքերն են՝

- երեխայի ծննդյան պահին ամուսնության մեջ չգտնվող հոր և մոր համատեղ դիմումը.
- «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերում՝ երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող երեխայի հոր դիմումը.
- հայրության կամ հայրության ճանաչման փաստի որոշման մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը:

3.6 Անվան փոփոխումը.

Տասնվեց տարին լրացած անձն իրավունք ունի սահմանված կարգով փոխելու իր անունը, որը ներառում է անունը, հայրանունը և ազգանունը:

Անվան փոխման պետական գրանցումը կատարվում է անունը փոխել ցանկացող անձի՝ մշտական բնակության կամ ծննդի պետական գրանցման վայրի ՔԿԱԳ մարմնում՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համաձայնությամբ:

Անվան փոխման մասին դիմումը ՔԿԱԳ մարմինը քննության է առնում դիմում տալու օրվանից երկամսյա ժամկետում:

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հարգելի պատճառների առկայության դեպքում դիմումի քննարկման ժամկետը ՔԿԱԳ մարմնի ղեկավարը կարող է երկարաձգել առավելագույնը մեկ ամսով, իսկ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը՝ առավելագույնը երկու ամսով:

3.7 Մահվան պետական գրանցման հիմքերն են՝

- բժշկական կազմակերպության կամ բժշկի տված՝ մահը հաստատող սահմանված ձևի փաստաթուղթը.
- անձի մահվան փաստի հաստատման կամ անձին մահացած ճանաչելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը:

Մահվան պետական գրանցումն իրականացնում է մահացածի վերջին բնակության վայրի, մահը վրա հասնելու վայրի, մահացածի դիակի հայտնաբերման կամ մահվան մասին փաստաթուղթ տված կազմակերպության գտնվելու վայրի ՔԿԱԳ մարմինը:

*Քաղաքացիական կացության ակտի գրանցման հիման վրա քաղաքացիներին տրվում է ՀՀ կառավարության կողմից սահմանված նմուշի քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վկայական (ՔԿԱԳ վկայական):
ՔԿԱԳ վկայականն ստորագրում է ՔԿԱԳ մարմնի ղեկավարը, և հաստատվում է ՔԿԱԳ մարմնի կնիքով:*

Եզրակացություն

Այսպիսով, 2011 թվականի մարտի 1-ից մինչև մայիսի 31-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի երիտասարդ իրավաբանների կողմից իրականացված հասարակական մոնիթորինգի ընթացքում պարզ դարձավ, որ ՔԿԱԳ բաժինների կողմից ծառայությունների մատուցման ժամանակ ի հայտ եկած հիմնախնդիրները համապատասխան օրենսդրական բնույթի փոփոխություններ են ենթադրում: Սակայն այդ փոփոխություններին զուգահեռ անհրաժեշտ են վարչական բնույթի փոփոխություններ՝ միտված ՔԿԱԳ աշխատակիցների շրջանում կարգապահության մակարդակի բարձրացմանը, նրանց կողմից էթիկայի կանոնների պահպանմանը, կոռուպցիոն դրսևորումների բացառմանը: Անհրաժեշտ են կատարել ոլորտի համապարփակ բարեփոխումներ, քանզի խախտումները ոչ միայն մեր քաղաքացիների իրավագիտակցության ցածր մակարդակով են պայմանավորված, այլ նաև գոյություն ունեցող ՔԿԱԳ համակարգի ինստիտուցիոնալ թերություններից: Այդ թերություններից են առաջանում կոռուպցիոն բնույթի խախտումներ:

Առանձնացնելով այս ոլորտում նախատեսված բարեփոխումները, պետք է նշել որ սույն զեկույցի գծապատկեր 4-ում հարց է ուղղվել քաղաքացիներին, պարզելու նրանց վերաբերմունքը ամուսնության պետական գրանցման ժամկետի կրճատմանը: Հարցմանը մասնակցած քաղաքացիների մեծ մասը կողմ էր, որ այդ ժամկետը կրճատվի մինչև 10 օրով (հարցմանը մասնակցածների 24%-ը): Այս կապակցությամբ պետք է նշել, որ օրենսդրական բարեփոխումներով ամուսնության պետական գրանցման ժամկետների մասով կատարվել են փոփոխություն, համաձայն որի «Ամուսնության պետական գրանցումն իրականացվում է ՔԿԱԳ մարմին ամուսնացող անձանց ներկայացրած համատեղ դիմումում նշված օրը, սակայն ոչ շուտ, քան դիմումը ներկայացնելու օրվան հաջորդող 10-րդ օրը եւ ոչ ուշ, քան երեք ամիսը: Ամուսնացող անձանց համատեղ դիմումի հիման վրա ամուսնության պետական գրանցման 10-օրյա ժամկետը կարող է կրճատվել հարգելի պատճառների առկայության դեպքում»:

Վերջում պետք է հավելենք, որ որպես խախտումների կանխարգելման միջոց կարևորվում է նաև շարունակական մոնիթորինգների մեխանիզմը, և քաղաքացիների դրական վերաբերմունքն ու շնորհակալական խոսքերը դրա վկայությունն է:

Ամփոփ առաջարկություններ

Ամփոփելով 2011 թվականի մարտի 1-ից մինչև մայիսի 31-ը ընկած ժամանակահատվածում Հայաստանի երիտասարդ իրավաբանների կողմից իրականացված հասարակական մոնիթորինգի ընթացքում իրականացված աշխատանքները և ստացված տվյալները, կարող ենք արձանագրել, որ ոլորտում առկա են խնդիրներ, որոնց շուտափույթ լուծումը կնպաստի ոլորտի թափանցիկությանը և մատուցվող ծառայությունների որակի բարձրացմանը:

Ոլորտում բարձր են կոռուպցիոն ռիսկերի առաջացմանը նպաստող հանգամանքները: Թեպետ քաղաքացիական կացության ակտերի գրանցման համար գանձվող տուրքի դրույքաչափերը սահմանված են օրենքով, սակայն, որպես կանոն, գործում են նաև սովերային գներ:

Ցածր է քաղաքացիների տեղեկացվածության մակարդակը՝ ինչպես գործող պետական տուրքի դրույքաչափերի, այնպես էլ քաղաքացիական կացության ակտերի գրանցման

ընթացակարգերի, պահանջվող փաստաթղթերի վերաբերյալ: Այդ հանգամանքը պատճառ է դառնում ՔԿԱԳ մարմինների աշխատակիցների կողմից քաղաքացիներին ոչ պատշաճ սպասարկման, կամայականությունների դրսևորման, հավելյալ գումարներ գանձելու և այլ չարաշահումների համար:

Բազմաթիվ են վարչարարական բնույթի խնդիրները: Չնայած այն հանգամանաքին, որ ՔԿԱԳ մարմիններն ունեն համայնքային ենթակայություն, այդուհանդերձ համայնքի ղեկավարների կողմից ՔԿԱԳ մարմինների աշխատակիցների աշխատանքային կարգապահության նկատմամբ պատշաճ հսկողություն չի սահմանվում: Արդարադատության նախարարությունը մեթոդական բնույթի վերահսկողություն է իրականացնում, ինչպես նաև կարող է առաջարկություն ներկայացնել ՔԿԱԳ բաժնի ղեկավարներին և աշխատողներին խրախուսելու կամ կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ:

Այս երկակիությունը երբեմն պատճառ է դառնում բարձրթողության, ինչն էլ նպաստում է կամայականությունների դրսևորմանը և կոռուպցիոն ռիսկերի ի հայտ գալուն: Արդյունքում, շատ հաճախ կամայականության հանդիպած քաղաքացիները չգիտեն ում և ինչպես բողոքեն:

Ոչ բարվոք վիճակում են ՔԿԱԳ մարմինների շենքային պայմանները, գույքային և տեխնիկական զինվածությունը: Այս հանգամանքը ևս նպաստում է ոչ պատշաճ սպասարկմանը:

Հաշվի առնելով վերոհիշյալը, առաջարկում ենք, որպեսզի ոլորտում այնպիսի քաղաքականություն իրականացվի, որը կնպաստի վերոհիշյալ խնդիրների լուծմանը: Մասնավորապես անհրաժեշտ է.

ա/ հստակեցնել մեթոդական վերահսկողության և աշխատանքային կարգապահության նկատմամբ հսկողության գործառույթները.

բ/ ներդնել վճարումների իրականացման այնպիսի ընթացակարգեր, որոնք ի սպառ կբացառեն օրենքով չնախատեսված հավելյալ գումարների գանձման հնարավորությունը.

գ/ իրականացնել իրազեկման բնույթի լայնածավալ աշխատանքներ, որոնք կներառեն ինչպես գանձվող պետական տուրքի վերաբերյալ սպառիչ տեղեկատվություն, այնպես էլ յուրաքանչյուր քաղաքացիական կացության ակտի գրանցման համար ներկայացվող փաստաթղթեր սպառիչ ցանկը.

դ/ ներդնել բողոքարկման այնպիսի մեխանիզմներ, որը հնարավորություն կընձեռի քաղաքացիներին ողջամիտ ժամկետներում պաշտպանել իրենց իրավունքները և օրինական շահերը, ինչպես նաև կանխել կամայականությունները.

ե/ լուծել ՔԿԱԳ մարմինների նյութատեխնիկական ապահովման խնդիրները, ՔԿԱԳ մարմինների աշխատակիցների համար իրականացնել մասնագիտական ուսուցմանը ծրագրեր, ներդնել վարքագծի կանոններ, ինչպես նաև կարգապահական պատասխանատվության ենթարկելու ավելի գործուն մեխանիզմներ: